



Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԹԱՆԱՀԱՏԻ ՎԱՆՔԸ ԿԱՄ ՂԱՐԱՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Թանահատի վանքը գտնվում է այժմյան Եղեգնաձորի շրջանում, Վերնաշեն (Բաշքենդ) գյուղից երեք կիլոմետրաչափ դեպի արևելք, փոքրիկ ձորակի ձախ ափին, պատմական Հայաստանի Սյունյաց նահանգի Վայոց ձոր գավառում։ Վերնաշենը հնում կոչվել է Սարկողովք կամ կրճատ՝ Սրկղունք, որ ասել է, թե այստեղ խաղողն ու զանազան մրգերը սարի մեծությամբ կողովներով են հաշվել։ Դա ինքնին վկայություն է այն բանի, որ Վերնաշենում հնումն էլ խիստ զարգացած են եղել խաղողագործությունն ու պտղաբուծությունը։

Պռոշյանները ԺԳ դարում ժառանգելով Վայոց ձոր գավառի այդ մասը, Սրկղունքը դարձնում են իրենց նստավայրն ու վարչական կենտրոնը, այնտեղ կառուցում են իրենց համար իշխանական ապարանք, մեծ եկեղեցի, որով ավելի զարգանում և բարգավաճում է գյուղը, դառնալով Հայաստանի խոշոր ու նշանավոր բնակավայրերից մեկը։

Թե ե՞րբ է հիմնադրվել Թանահատի վանքը, ստույգ հայտնի չէ։ Ժ դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին, խոսելով Ստեփանոս Սյունեցու մասին, տեղեկացնում է, որ նա Հռոմից, ուր գնացել էր ուսումը շարունակելու, վերադառնալով Հայաստան, Սյունյաց Բարգեն և Քուրդո իշխանների խնդրանքով ձեռնադրվում է եպիսկոպոս և միարդպուլիտ Սյունյաց և մի տարի անց

սպանվում է Մոզ ավանում, որից հետո նրա մարմինը բերում նախ ամփոփում են Արկյազ գյուղի սենյակում, ապա տանում և թաղում են Թանահատի վանքում։ Եվ ի Բարգեն է և ի Քուրդոյ է խնդրոյ լինի ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց։ Եւ մի ամ կալեալ ղեպիսկոպոսութիւնն սպանեալ լինի ի Մոզն գաւառի։ Ասեն, թէ ի պիղծ կանանց եղև մահ նորա. զորոյ զմարմինն առեալ բերին ի յԱրկազեան սենեակն և անտի փոխեցին ի Թանատայ վանս ի հանգիստ»¹։

Այդ նույն Ստեփանոս Սյունեցու մասին, կապված Թանահատի վանքին, ավելի հանգամանորեն է պատմում ԺԳ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը։ Օրբելյանի վկայությամբ Ստեփանոս Սյունեցին Դվին մայրաքաղաքից էր, քաղաքի ավազ երեցի որդին։ Մանկությունից Ստեփանոս Սյունեցին մեծ ձգտում է ունենում ուսման, ուստի որոշ ժամանակ Մաքինյաց վանքում ուսանելուց հետո, գնում է Կոստանդնուպոլիս ուսումը շարունակելու։ Վերադառնալով հայրենիք, ձեռնադրվում է Սյունյաց եպիսկոպոս և մի տարի եպիսկոպոսություն անելուց հետո, մեռնում է եղբրական մահով, սպանվելով մի կնոջից Մոզ ավանում։ Հետո, խոսելով նրա թաղման հանգամանքների մասին, Օրբելյանն ավելացնում է. «Ապա յառաւօտուն իմացեալ պաշտօնէիցն՝ բազում ողբովք բարձին զնշխարս սրբոյն, տանէին ի սուրբ մենարանն ի լեառն կոչեցեալ Սիօն, որ պայ-

¹ Մովսեսի Կաղանկատուացոյ «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860 թ., էջ 256։

առանալոր ձգնալոր արամբբ յայնմ ժամա-
նակի քան զՄինայն և զՍկիւթայն յնգիւստու-
րոր լուեալ Արկաղան գեօղն՝ տէրամբն իւ-
նեանց ելին ընդ յառաջ, և հաւանեցուցին
պապասաւորսն հանգուցանել ի սենեակն որ
պայտուն սրբոյն Քրիստափորի՝ անյաղթ զօրա-
վարին շինեալ էր. զոր տարեալ անդէն հան-
գուցին ի սենեկին»:

Ապա, պատմելով Ստեփանոս Սյունեցու
մահից անմիջապէս հետո տեղի ունեցած մեծ
ղերկրաշարժի մասին, Ստեփանոսի թաղման
առթիւ Օրբելյանը շարունակում է. «Իսկ յետ
40 ամուր պատուհասին դադարեցաւ բարկու-
թիւնն Աստուծոյ ի վերուստ, և ժողովեալ
մահացորդը գաւառին կոչեցին զկաթողիկոսն,
և առնեն ժողով վանականաց, և բազում
աւուրս ցայգապաշտօն կատարեալ փոխեցին
զնշխարս սրբոյն ի միաբանակեաց վանսն
Թանահատի վանից...: Եւ շինեալ ի վերայ
փոքրիկ մատուռ մի, զոր յետոյ յ728 թուա-
կանին շինեցին բնակիչք տեղոյն եկեղեցի
գմբեթայարկ գեղեցիկ յօրինուածովք, և եղին
զտապան սրբոյն ի հիմն նորա: Եւ էր կա-
տարումն Սրբոյն Ստեփանոսի ի թուականու-
թեանն Հայոց 184, ի հրօտից ի 15 և յուլիսի
21»²:

Ստեփանոս Օրբելյանի վերը մեջբերված
տեղեկութիւնից, որի համաձայն Ստեփանոս
Սյունեցու մահը տեղի է ունենում 735 թվա-
կանին, միաժամանակ պարզվում է, որ նրա
զին երկար չի պահվում Արկաղ գյուղի Քրիս-
տափոր զորավարի անվան կառուցած սեն-
յակում: Ստորերկրյա ցնցումները, որոնք
շարունակվում են շուրջ 40 օր, դադարելուց
հետո և, մի քանի օր էլ ցայգապաշտօն կա-
տարելուց հետո, Ստեփանոսի տապանը Ար-
կաղից տանում և ամփոփում են Թանահատի
վանքում, կառուցելով նրա գերեզմանի վրա
հատուկ մատուռ: Դրանից էլ որոշակի պարզ
է դառնում, որ Թանահատի վանքը 735 թվա-
կանին արդեն գոյություն ունի:

Առանձնապէս հետաքրքրական են մենաս-
տանը Թանահատ անունով կոչելու և նրա
հիմնադրման ճիշտ ժամանակի, ինչպէս և
նրա հռչակավոր լինելու մասին նույն Օր-
բելյանի հաղորդած տեղեկութիւնները, որոնք
անհրաժեշտ ենք գտնում մեջ բերել ամբող-
ջությամբ. «Յայնմ ժամանակի պայծառա-
նայր սուրբ և երկնահարազ գերափառ և հռչա-
կելի ուխտն Թանահատի վանից, որ կայ ի
վերոյ Սիւնեաց յատորոտ լերինն ի բարձրա-
վանդակի միոջ ի մէջ անտառին: Եւ էին սահ-
մանաւորք, մշտապաշտօնք հեռացեալք յա-



Թանահատի վանք.— Ընդհանուր տեսքը արևմուտքից:

մենայն փափուկ կերակրոց, միայն աշտուն
հացիւ և լոկ ջրով վճարէին զպէտս իւրեանց,
և զայն յաւուրն մի անգամ ընդ երեկս. լոկիք,
հեղաշարժ, որք իւր կանթեղունս անէջս կա-
խեալք լինէին յաղօթս զցայգ և զցերեկ. և
պաշտօն իւրեանց երբէք ոչ խափանէին
զցայգ և զցերեկ: Եւ բաց ի սպասաւորացն
ընդ դրունս վանիցն ոչ որ ելանէր արտաքս.
և թէպէտ բազում անգամ հարկեցան իշխա-
նացն և յսպիսկոպոսաց Սիւնեաց՝ ոչ առին
յանձն ի կիրակէքն ի Թան կամ ի պանիր
կամ յիւղ խթիլ, այլ բանջարօք և ընդով շա-
տանային. վասն որոյ Թանահատը կոչեցան:
Եւ ի զխաւոր տօնսն ի ձիթոյ ճաշակէին և
սակաւ բաժակօք. և զայս ծանոց մեզ պատ-
մութիւնն երանելոյն Մաշտոցի որ ի Սեան:
Բայց զտաք յիւրոց արձանագրութեանցն հիշ
400 ամաւ յառաջ շինեցաւ եկեղեցին քան
զՀայ թուականն, յիշխանացն Սիւնեաց յա-
նուն Սրբոյ նախավկային Ստեփանոսի: Եւ
էր եղեալ հայր վանիցն որոյ անուն Մխի-
թար...»³:

Ինչպէս տեսնում ենք, ըստ Օրբելյանի Թա-
նահատի վանքը պետք է հիմնադրված լինի

² «Պատմութիւն նահանգին Միսական», արաբեալ
Ստեփանոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Սիւնեաց»,
Թիֆլիս, 1910 թ., գլ. ԼԱ, էջ 131—144:

³ Նույն տեղում, էջ 160:

151 թվականին, որովհետև հեթանոսության շրջանում, ինչպես հայտնի է, հայերը իրենց սեփական, ազգային թվականությունը սահմանեցին 551 թվականին Դվինի եկեղեցական համաժողովում:

Բացի այն, որ Օրբելյանը Թանահատի վանքը դասում է Հայաստանի նշանավոր ու հռչականուն մենաստանների շարքը, ինչպես այդ մասին նշվեց վերևում, միաժամանակ նա Թանահատի վանքը համարում է Սյունյաց աշխարհի գլխավորագույն մենաստաններից մեկը. այդ առթիվ նա գրում է. «... Ի վայոց ձորոյ կողմանն Խոտակերից վանք, որ Քարկոփ կոչի... Ապա Հերմոնի վանք. Թանատէի վանք յորում կա նշխարք Սրբոյն Ստեփաննոսի. Գնդայի վանք: ... Ահա այս ամենայն վանեար յականէ և յանուանէ ի գլխաւորադունիցն, յորոց բազումք ամայի և թափուր են ի շինութեանց, և սակաւքն ի լուսաւորութեան այժմ, որք են թուով 30. բայց այլ ևս բազումք կային զորս ոչ թուցարք»⁴:

Սակայն, չնայած այն բանին, որ Թանահատի վանքը եղել է Հայաստանի նշանավոր և Սյունիքի գլխավորագույն մենաստաններից մեկը, այնուամենայնիվ նրա մասին մատենագրական աղբյուրներում մինչև ԺԳ դարը, եթե նկատի չունենանք պատմիչ Մովսես Կաղանկատվացուն, ոչ մի հիշատակություն չկա: Ստեփանոս Օրբելյանի այն նշումը, թե «այս ամենայն վանեար յականէ և յանուանէ ի գլխաւորադունիցն, յորոց բազումք ամայի և թափուրք են ի շինութեանց», ամենայն հավանականությամբ պետք է վերաբերի նաև Թանահատի վանքին:

Թե ե՞րբ է տեղի ունեցել վանքի ավերումն ու ամայացումը, ստույգ հայտնի չէ, սակայն որոշակի պարզ է, որ վանքը վերականգնվել ու վերահաստատվել է ԺԳ դարի վերջին քառորդի սկզբներին, այսինքն Պոռչյանների տիրապետության շրջանում, երբ 1279 թվականին կառուցվում է Ս. Ստեփանոս նախավկայի անվան եկեղեցին, ինչպես այդ մասին տեղեկացնում է Ստեփանոս Օրբելյանը, որի մասին նշվեց վերևում:

Տեղում պահպանված սրբատաշ քարուկիր շարվածքների մի շարք մնացորդները նույնպես հաստատում են, որ վանքը մինչև ԺԳ դարը, այսինքն մինչև Ս. Ստեփանոս նախավկայի անվան եկեղեցու կառուցումը, եղել է ավերակ վիճակում:

ԺԳ դարից հետո էլ Թանահատի վանքի մասին տեղեկությունները խսկապես բացակայում են: Թե ո՞րքան ժամանակ է նա գոյություն ունեցել և թե ինչպիսի՞ն է եղել նրա առօրյան իր գոյության ընթացքում, որոշակի

պարզ չէ. հայտնի չէ նաև, թե ե՞րբ է դադարել որպես մենաստան գոյություն ունենալուց:

Վանքի վրա փորագրված արձանագրություններն էլ, որոնք բավականին մեծ թիվ են կազմում և գլխավորապես նվիրատվական բովանդակություն ունեն, ԺԴ դարից այն կողմ չեն անցնում, ուստի ի վիճակի չեն որևէ չափով լույս սփռելու նրա անցյալ պատմության վրա: Չնայած այդ արձանագրություններից երկուսն ունեն ԺԶ դարին վերաբերող թվականություն, սակայն դրանք տապալնագրություն լինելու պատճառով, չեն կարող երաշխիք ծառայել այն բանի, թե ԺԶ դարում վանքը եղել է կանգուն և չեն վիճակում, որովհետև թաղումներ այնտեղ կարող էին տեղի ունենալ նաև վանքի ավերակ վիճակում եղած ժամանակ:

Ավելի ուշ, ԺԹ դարի առաջին քառորդում, վանքին կից աղբեջանական փոքրիկ գյուղ է հիմնադրվում և, շնորհիվ այն բանի, որ վանքը կառուցված է եղել սև գույնի քարերով, ուստի թե՛ վանքը և թե՛ նոր հիմնադրված գյուղը նոր բնակիչները կոչում են Ղարա վանք (Սև վանք):

Բ. ՀՈՒՇԱՐԱՋԱՆՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Թանահատի վանքը բաղկացած է երկու եկեղեցուց և գերեզմանատնից. կից նկատելի են այլ կառուցվածքների հետքեր:

Գլխավոր եկեղեցին մատենագրական աղբյուրներում և արձանագրությունների մեջ կոչվում է Ս. Ստեփանոս նախավկայի անունով: Դա զմբեթավոր, միջին բարձրությամբ մի կառուցվածք է, որի հատակագիծը արտաբնական ուղիղ բառակյունի է, իսկ ներսից, շնորհիվ անկյուններում տեղադրված խորանների, ստացել է խաչաձև տեսք՝ ուղղանկյուն խաչթևերով: Արևելյան խաչթևում տեղադրված է կիսակլոր արքիդե՝ ցածրադիր բեմով:

Խաչթևերը միացնող անկյուններից ձգվում են գլանաձև բներ և դրանց համապատասխան խարիսխներ ու խոյակներ ունեցող կիսասյուներ, որոնք միանալով կամարներով, իրենց վրա են կրում զմբեթը: Վերջինիս թմբուկը ներսից կլոր է, իսկ արտաքուստ 12 կողանի. վեղարը վերջանում է սուր ծայրով և թմբուկի վրա է նայում սուր եռանկյունաձև հավելվածներով, որոնք համընկնում են թմբուկի կողերի հետ: Թմբուկի կողերը վերի մասերում զարդարված են զանազան կենդանիների ու թռչունների բարձրաքանդակներով:

Արևելյան կողմի խորանները, որոնք դասավորված են արքիդի երկու կողքերին, երկ-

⁴ Օրբելյան, էջ 339—340.

հարկանի են. վերի հարկի խորանների մուտքերը բացվում են արտիդի մեջ՝ իրար դիմաց, չափավոր բարձրանում են հինգ աստիճան ունեցող աստիճանների սանդղաթներով, իսկ ստորին հարկի խորանների մուտքերը բացվում են դեպի լայն արևմուտք՝ հարավային ու հյուսիսային խաչքների մեջ: Արևմտյան կողմի խորանների մուտքերը բացվում են այդ կողմի խաչքի մեջ՝ իրար դիմաց: Բոլոր խորաններն էլ արևելյան կողմից ունեն կիսակլոր փոքր արտիդներ:

Միակ մուտքն արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ քարով և ուղղանկյուն գծավոր շրջանակով: Յուրաքանչյուր ճակատից բացվում է մեկական երկար ու նեղ լուսամուտ՝ ուղղանկյուն գծավոր շրջանակով: Նման շորս հատ լուսամուտներ էլ բացվում են գմբեթի թմբուկի մեջ. մեկական փոքր լուսամուտներ էլ բացվում են արևելյան կողմի խորանների արևելյան պատերից և մի փոքր կլոր լուսանցք էլ հարավ-արևմտյան անկյան խորանի հարավային պատի մեջ:

Արտաքուստ, յուրաքանչյուր պատի մեջ կան երկուական եռանկյունաձև խորշեր: Հարավային պատի վրա քանդակված է արևի ժամացույց և թուղանների բարձրաքանդակ՝ մայր հավիկը իր ձագերի հետ. իսկ այդ նույն պատի վրա, լուսամուտից վերև, քանդակված է Պողոսյան իշխանների տոհմանիշը՝ թևատարած արծիվը խոյը ճանկերում բռնած:

Գմբեթի թմբուկի առանձին կողերի վրա եղած բարձրաքանդակները պատկերում են առյուծն ու վագրը կռվելիս, եղան գլուխ և այլն:

Ամբողջ շենքը կառուցված է մուգ կապտագույն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախի միացությունով: Մածկը թաղակալ է՝ երկթեք տանիքով, որը պատած է սալաքանդակով: Վանդուն վիճակում է՝ մասնակի քանդումներով, քանդված են պատերի վերի քարաշարերը քիվերի հետ միասին, հարավային և արևելյան ճակատների վերի մասերը, արևելյան կողմի վերին հարկի խորանների ծածկը, հարավ-արևմտյան անկյան խորանի տանիքը, թափված են տանիքի սալաքարերը, քայքայված է սալահատակը, քանդված է գմբեթի վեղարի տանիքի մասը, ուր երևում են վեղարի մեջ դրված զանազան մեծությամբ կարմրագույն ներկերով ներկած կավե ամաններ:

Նրկորդ եկեղեցին արձանագրությունների մեջ կոչվում է Ս. Նշան կամ Վարդա Ս. Նշան, գտնվում է Ս. Ստեփանոս եկեղեցու հյուսիսային կողմում՝ նրան կից: Սրա կառուցման ժամանակը որոշ չէ, սակայն պարզ կերպով նկատվում է, որ այն կառուցված է



Թանախատի վանք.— Ս. Ստեփանոս եկեղեցու հարավային ճակատը՝ արևի ժամացույցի և Պողոսյանների տոհմանիքի քանդակներով:

Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցումից՝ այսինքն 1279 թվականից հետո:

Ս. Ստեփանոս եկեղեցու վրա փորագրված 1310 թվականը ունեցող արձանագրության համաձայն (արձանագրություն Ա), ոմն Հասիկ կառուցում է ասարանոցը և նվիրում վարագա Ս. Նշանին և Ս. Ստեփանոսին: Դրանից որոշակի պարզ է դառնում, որ 1310 թվականին արդեն գոյություն ուներ այդ եկեղեցին: Հետևապես Ս. Նշան եկեղեցին պետք է կառուցված լինի 1279—1310 թվականների ժամանակամիջոցում:

Ուղիղ քառանկյունի հատակագիծ ունեցող փոքրիկ կառուցվածք է: Մածկը եղել է թաղակալ: Հարավային կողմից առանձին պատ չի երևեցել, ուստի ծածկի թաղը հենվել է Ս. Ստեփանոս եկեղեցու հյուսիսային պատին կից կառուցված որմասյունների ու դրանց միացնող որմակամարների վրա: Եկեղեցու հյուսիսային պատը ներսից նույնպես ունի երկու որմասյուններ, որոնք դարձյալ միանում են որմակամարներով: Միաժամանակ այդ երկու պատերի որմասյունները միանում են առանձին կամարներով՝ գոտեկելով ծած-

կի թաղը, իսկ պատերի վրա առաջացնում են կամարակապ խոր ու մեծ խորշեր:

Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ քարով ու պարակալով: Ճակատակալ քարը պատած է հարթաքանդակներով, ուր պատկերված է որսի տեսարան՝ ընդարձակ դաշտավայր լի զանազան վայրի կենդանիներով, թռչուններով ու գազաններով, կենտրոնում մի հեծյալ որսկան, որը նիզակը խրում է առյուծի թե վագրի բերանը: Մուտքի շրջանակի կողերը միացնող կամարը զարդարված է շթաքարաձև (ստակտիտ) քանդակներով:

Շարված է նույն մուգ կապտագույն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախի միացություններով: Ավերակ միջակում է. քանդված են արևելյան մասը, կանգուն մնացած պատերի վերի մասերը. մնում է ծածկի կենտրոնի մասը՝ մի կամարով: Քանդված մասերը թափված են շենքի ներսը, որի պատճառով հուշարձանի ներսի էությունը պարզ է:

Եկեղեցիներին կից նկատելի են սրբատաշ մեծ քարերով շարված պատերի հետքեր, որոնց ինչ լինելը, առանց հատուկ պեղումների, հնարավոր չի պարզել:

Վանքի շուրջը կան մի քանի գերեզմաններ, որոնց տապանաքարերը թաղված են գետնի մեջ և մի քանի խաչքար-մահարձաններ, որոնցից ոմանք ունեն տապանագրություններ:

Փոքրիկ գերեզմանատունը գտնվում է վանքից քիչ դեպի հարավ, Արկաղի Ս. Խաչ տաճարի ճանապարհի եղջին, փոքրիկ բարձունքի վրա, ուր կան նաև մի քանի քանդակազարդ խաչքարեր, որոնք համարյա բոլորն էլ տեղահան են արված. ոմանք ունեն տապանագրություններ:

Գ. ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արձանագրությունները մեջ ենք բերում վերծանված ձևով, պահպանելով տողերի շարահյուսության կարգը: Մեջբերումը կատարում ենք ըստ հուշարձանների, նախ արտաքին երեսին փորագրվածները, ապա ներսի կողմում փորագրվածները: Մի քանի արձանագրություններ խիստ հողմահարված ու եղծված լինելու պատճառով հնարավոր չի եղել ընդօրինակել, ուստի մեջ ենք բերում այլ աղբյուրներից՝ մատնանշելով աղբյուրը:

Ա. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԵՅԱՆ ՊԱՏԻՆ, ԱՐՏԱՔՈՒՍՏ.

- 1 Կամառն Աստուծոյ Ես Հաս-
- 2 իկ շինեցի գԱսար-
- 3 աւնցն եւ տվի Վարագ-

- 4 ա Սուրբ Նշանիս եւ Սուրբ Սո-
- 5 եփանոսի: Վարդապետ եւ միաբանքս
- 6 տվին :Գ: Ժամ քառասն-
- 7 ից տաւնին: Կատարիչ-
- 8 քն արհնին յԱստուծոյ. Թվիս 24 (1310):

Բ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ

- 1 Եւ, Ծանգամանի-
- 2 ն կանկ [նե] ցի խ-
- 3 աշս Միս-
- 4 իքար-
- 5 ի Դար-
- 6 ոսին.
- 7 ով կարդ-
- 8 էք ի
- 9 Թվ. ՌԺԴ (1565):

Գ. ՆՈՒՅՆ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ.

1 Կամառն կենարարին եւ կուսածին անմահ թագաւորին, յաշխարհակալ Արդունին, իշխանութեան հռչափին, ողորմութեամբն Պապափին, Հասանայ [Ես] էաշո բէկս՝ թոնն խասայ շանի, որդի Միսիքարայ, տվի գմեր ձեռատունկ այգին գ-

2 Գայլարեց հող՝ տվի Սուրբ Ստեփանոսի. միաբանք սանմանեցին :Ը: Ժամ, :Գ: Հասանայ, :Ե: Սարգսի՝ իմ աղբէրացն հողոյն: Ի Թվ. 21 (1281). Կատարիչ արհնին յԱստուծոյ:

Դ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ.

1 Կամառն Աստուծոյ Ես Սանհարս ու Թանվըքս միաբանեցաք Սուրբ Ստեփանոսիս
2 եւ տվաք Արեւի հողն Հովվեց հողովն. միաբանքս տվին :Ե: ար ժամ Վարագա Խաչի տաւնին Կատվհատին Աագին էլ տվաք:

Ե. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ.

- 1 Կամառն Աստուծոյ Ես Թեկիս միա-
- 2 բանեցա սուրբ ուխտիս եւ տվի
- 3 ընծա. միաբանքս տվին
- 4 :Բ: Ժամ Թեկի տաւնին.
- 5 Կատարիչքն արհնին:

2. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՑ ԱՐԵՎԵՅԱՆ ԿՈՂՄՈՒՄ.

- 1 Կամառն Աստուծոյ Ես Սիմիանս տվի
- 2 գմեր հայրենի էգին պարոն-
- 3 ացն՝ ողորմութեամբ էաշո,
- 4 Մամայաթունին՝ Սուրբ Ստե-
- 5 փանոսի եւ Սուրբ Նշանիս
- 6 Միսիքարս հողոյն. միաբ-
- 7 անքն սանմանեցին :Գ: Ժամ Տեառ-

8 ընդառաջին՝ Բ: Մխիթարա
9 :Ա: ինձ. ի քվիս :Զ:Ծ:Ը: (1309):

Է. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ԱՐԵՎԻ ԺԱՄԱՅՈՒՅՅՈՒՆ
ՆԵՐՔԵՎ.

- 1 Կամաւ Աստուծոյ եւ Սեբար միաբանե-
ցայ
- 2 սուրբ եկեղեցիս եւ տվի :Ի: դեկան եւ
միայբանք սահ-
- 3 մանեցին :Ա: աւր ժամ Նաւայարին. կա-
տարիչ արհնին:

Ը. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՅ ՆԵՐՔԵՎ.

- 1 Կամաւն Աստուծոյ եւ Պե-
- 2 տոս յիմ հալ-
- 3 ալ արդեանց տուի
- 4 ծախս զանգիս. մի-
- 5 արանքս սահմանեց-
- 6 ին :Բ: ժամ Երեւման հա-
- 7 շին: Կատարիչ արհնին:

Թ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ԱՐԵՎԻ ԺԱՄԱՅՈՒՅՅՈՒՆ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂՄՈՒՄ.

- 1 Կամաւ Աստուծոյ եւ Արեւմատ միաբա-
նեցա Սուրբ Ստեփան-
- 2 ոսի եւ տվի :Ի: դեկան եկեղեցոյս եւ
միաբանք սահման-
- 3 եցին :Ա: աւր ժամ Խաչգիտիս: Կատա-
րիչ արհնին յԱստուծոյ:

Ժ. ՆՈՒՅՆ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԻՆ,
ՄՈՒՏՔԻ ԶԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ, ԱՐՏԱՔՈՒՄՏ.

- 1 Յանուն Աստուծոյ եւ Բուբայիս, քոռն
Սամադայիւն, որդիս

ԺԱ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՅ ՆԵՐՔԵՎ,
ԶԱՐՈՒՆԱԿԱՐԱՐ.

- 1 Յանուն Աստուծոյ եւ Սարգիս որ տվի
Թանատի վանից Սուրբ Ստեփանոսի զԶաս-
- 2 իտեայ վարին հողն անցանիք. միաբանք
տվին ինձ զՅայտնութեան :Ե: աւր :Բ: խո-
րան. Ով խափանէ :ՅԺԸ: հայրապետացն ե-
- 3 զովեալ եղիցի:

ԺԲ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՅ ՆԵՐՔԵՎ.

- 1 Կամաւ ամենակալին Աստուծոյ եւ Պէ-
նարի, որդի Սմբ-
- 2 ատա, քոռն Լիպարտի տէր Փանծաբա-
ղին եւ
- 3 ամուսին իմ Սուսա միաբանեցաք Սուրբ
Ստեփանոսիս
- 4 եւ տուաք ի մեր հալալ հայրենեաց որ ի
- 5 Փանծաբաղին զՄագմանեցն եւ զԱ.անշեց
- 6 էգին մեր հոգոյ բաժինն. Էփրեմ վարդա-
պետն [եւ] միաբան-



Թանահատի վանք.— Ս. Նշան եկեղեցու մուտքը:

- 7 քն սահմանեցին մեզ Աստուածածնի տո-
- նին
- 8 :Զ: պատարագ. եւ ով որ մեր հոգոյ
տուած վախմ-
- 9 իս հակառակ կայ :ՅԺԸ: հայրապետացն
- 10 եզովեալ եղիցի :ԶՎԷ: (1348):

ԺԳ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻ ԶՅՈՒՄԻՍԱՅԻՆ
ԿՈՂՄՈՒՄ.

- 1 Կամաւ Աստուծոյ եւ Ուֆան որ-
- 2 դի վհարչան Ուտեցի,
- 3 Տէր Իկենա, միաբան Սուրբ Ստեփ-
- 4 անոսի Ետու հալալ հայրենեաց
- 5 որ ինձ բաժին էր հասել
- 6 զեալիւնը Ղալանին հող-
- 7 երէն իր Ի հատովն եւ Յաւր-
- 8 ովն. վարդապետն եւ միաբանքն
- 9 սահմանեցին ինձ :Բ:
- 10 ժամ Սուրբ Նշանին տա-
- 11 նին կատարի: Թվի ԶԶԵ (1336):

ԺԴ. ՆՈՒՅՆ ՄՈՒՏՔԻ ԶԱԿԱՏԱԿԱՆ ՔԱՐԻ ՎՐԱ,
ԱՐՏԱՔՈՒՄՏ.

- 1 Թվ. ԶԶԶ (1307)
- 2 Կամաւ Աստուծոյ եւ Թաներս դաստ-

3 Ուֆանա, ամուսին Հասանա ասպարա-
պե-

4 տին Հայոց՝ որդոյն Պողոս ետու բնծա ի
հա-

5 լալ բնչից իմոց հայրենի տան մեր Թա-
նատի վանաց

6 առաջի վարագա Սուրբ Նշանիս, Սուրբ
Հարապետիս միաբան. եւ

7 սահմանեցին :Դ: պատարագ ինձ Աագ
հինգշաբաթ ար Հս-

8 գոյն գալստեանն, :Բ: Փոխման Աստուա-
ծածնին: Կատարիչ-

9 և արհնին:

ձԵ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՄՈՒՏՔԻ ԿԱՄԱՐԱՔԱՐԻ ՎՐԱ.

1 Կամաւ Աստուծոյ եւ Աագիաթունա ա-
մուսին Վաղթանկա՝ որդ-

2 ոյ հալաշանի տվի :Հ: ղեկան Սուրբ
Ստեփանոսիս [եւ] վարագա

3 Սուրբ Նշանիս. վարդապետս [եւ] միա-
բանես սահմանեցին :Դ: ար պատար-

4 ագ՝ :Բ: Մառագարդին, :Բ: Զատկին. կա-
տարիչն արհն-

5 ին :Թվ: ԶԿԲ (1313). խափանողն դատի:

ձԶ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՄՈՒՏՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ
ԿՈՂՄՈՒՄ.

1 [Կամաւ անման] քագատրին եւ խաչե-
ցելոյն Աստուծոյ, ի յար-

2 [այոյ]թեան մեծին եւ բարեպաշտին
Ապաղայ դահին [եւ ի

3 տէրութեան] Հայկազենայ տոհմիս եւ
սեռիս Թորգոմեայ,

4 ի կաթողիկոսութեան Տեան Յակոբայ եւ
յարհական եւ Բաշատոհմ յիշ-

5 խանութեան Պողոս եւ որդոյն Պապա-
ֆին, Հասանա, մանկան էաշոյ, շինեցաւ

6 սուրբ եկեղեցիս բնակարան փառացն
Աստուծոյ եւ յարկ Սրբոյն Ստեփանոսի, յեր-

կար կենդան-

7 ութին պարունացն. եւ սահմանեցաւ
փոխարէն :Դ: ար ամէն եկեղեցիս անառ-

գել զՔրիստոս

8 [պատարագել] մեծ պարունին մերոյ
Պողոսայ: Կատարիչ գրոյս արհնին յԱստու-

ծոյ:

9 Մեք պարունայս եւ միաբանես արձա-
նագրեցաւ որ ով հակառակ կայ այսմ կտա-

կիս դատի

10 յԱստուծոյ եւ յամենայն սրբոց. ամէն:

ձԷ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ.

1 Կամաւ Աստուծոյ եւ Բարինայ միայ-
բանեցայ սուրբ ուխտիս, տոփ

2 իմ հալալ բնչից բնծայ ի Սուրբ Ստե-
փանոս. միաբանես

3 սահմանեցին :Ա: ար պատարագ Սուրբ
հաչին: Կատարիչն արհնին յԱստուծոյ:

ձԸ. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ.

1 Կամաւ Աստուծոյ ամենակալին եւ Անի՝
որդի հալթին եւ ամուսին

2 իմ Սախոյս եւ Տուրափայէս միաբանե-
ցաւ Սուրբ Նշանիս եւ

3 Սուրբ Ստեփանոսիս եւ տվիք զմեր զնած
իզին հաւատորալեցայ քոյ մե-

4 ծափար. միաբանես խոստացան :Դ: պա-
տարագ ինձ, .Ա. Սախոյսին, .Ա. Լսունկանն...:

ձԹ. ՆՈՒՅՆ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ

ՊԱՏԻ ՎՐԱ, ՄՈՒՏՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄՈՒՄ,
ՆԵՐՍԻՑ.

1 Եւ Աւստպիտս :Խ: դե-

2 կան տվի եկեղեցոյս.

3 :Բ: Ժամ Սուրբ Մարգարիտ. կա-

4 տարիչն արհնին:

Ի. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, ՄՈՒՏՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ
ԿՈՂՄՈՒՄ.

1 Կամաւ ամենակալին Աստուծոյ

2 եւ Զուսմ, քոռն Ամիր Հասանայ, որ-

3 դի էաշո եւ կենակիցն իմ հոնադէն

4 տվաք զԱգասկան ջրաղացն Սուրբ Ստե-
փանոսի

5 գերեզմանս. վարդապետ [եւ] միաբանես
սահմանեցին :Դ:

6 ար պատարագ Սուրբ հաչին

7 տանին, :Բ: իմ աղբարն Իտ-

8 ռնասադին, :Ա: Էլխութոյ:

9 Կատարիչ արհնին, խափանող դատին
յԱստուծոյ:

ԻԱ. ՆՈՒՅՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ

ՊԱՏԻ ՎՐԱ, ԼՈՒՍԱՄՈՒՏԻՑ ՆԵՐՔԵՎ.

1 Կաման Աստուծոյ եւ Թանմլըս, դուստր
Մլսի-

2 քարա, քոռն հալաշանի տվի :Ա: վեց-
կի իմ

3 գերեզմանատունս. միաբանես սահմա-
նեցին

4 :Դ: Ժամ Սանդխտ տանին, :Բ: ինձ, :Բ:

5 իմ մար: Կատարիչ արհնին Աստու-
ծոյ:

ԻԲ. ՆՈՒՅՆ ԵՆՐՍՈՒՄ, ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ

ԱՆԿՅԱՆ ԽՈՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԿԱՄԱՐԻ ՎՐԱ.

Որք աղաթէք յայսմ Բաւարանիս՝ Սահակ
յաղաթս յիշեցէք:

ԹԳ. 160316 ՀՅՈՒՄԵ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՆՎՅԱՆ
ՄՈՐՔԻՆ ԽՈՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ՏԱԿԱՅԻՆ.

- 1 Ես Ամիրչան տվի զծախս մատուցն
- 2 յիմ է-
- 3 ալալ արդեանց եւ պապաւարք սուրք
- 4 ուխ-
- 5 տիս խոստացան :Բ: աւր
- 6 պատարագ Գաւրի եւ
- 7 ճակարա տաւ-
- 8 նին. կատարիչ-
- 9 Բ: աւրնին:

ԹԴ. 160316 ՀՅՈՒՄԵ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՆՎՅԱՆ
ՄՈՐՔԻՆ ԽՈՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ՎԵՐՎՈՐՄ, ՔԱՐՔՐ

- 1 Կանգնեցաւ իւ-
- 2 չա բարեխաւս Պե-
- 3 տրոսի եւ ծնողաց
- 4 իւրաց:

ԹԵ. 160316 ՀՄԹԵՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՆՎՅԱՆ
ՎԵՐՎՈՐՄ ԽՈՐԱՆԻ ՎԵՐՎՈՐՄ.

- 1 Յանուն Աստուծոյ եւ Գեղա :Խ: զեկան
- 2 տվի
- 3 մատուցն յիշատակ ինն եւ ծն-
- 4 աղաց իմաց:

ԹԶ. 160316 ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՄՆԱՅԻՆ ՊԱՏԻ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՐԵՎԱ. ԵՐԵՎԱԿԻ ՄԱՐԹՈՐՄ.
ԱՐՏԱՔԱՅՈՒՏ.

- 1 Կաման Աստուծոյ եւ Խաչապետի իմ
- 2 պարտեացն զարմարեամբն է-
- 3 աչա, Մամախարանին զԱղալ
- 4 տեղին հողն Սուր Ստեփան-
- 5 ոսի տվի. միաբանեա կարգեց-
- 6 ին :Բ: Ժամ մեր Սուր Ստեփանոսի
- 7 տաւին :Ա: Խաչնին :Ա: ինն:

ԹԸ. 160316 ՏԵՂՈՐՄ, ԵՆԽՈՐԱՆԻ ԵՐԵՎԱ.

- 1 Կանկնեցաւ
- 2 իւրա բարեխաւս
- 3 Խաչապետին
- 4 եւ իւր կենակ-
- 5 զին՝ Արզուման.
- 6 ԹՎ: Թ.Գ.-ին (1554):

ԹԹ. Ս. ՄՏԵՓԱՆԱՍ ԵՐԵՎԱՆԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ
ՎԵՐՎՈՐՄ ԵՂԱՄ ՄԻ ՏԵՂԱՆԱՅԻՆ ՎԵՐՎ.

Այս է հանկիւս Սարգիս Բանանայի որ
աւարտում է Տիր փառնեցաւ, յազօքս յիշե-
ցիւ. ԹՎ. ՊԵ (1355):

ԹԲ. Ս. ՄՏԵՓԱՆԱՍ ԵՐԵՎԱՆԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ
ՏԱԿ ՔԵՂԱՄ ՄԻ ՔԵՂԱՐԻ ՎԵՐՎ.

- 1 Յանուն
- 2 Աստուծոյ եւ
- 3 Խաչնին,
- 4 Գուսար
- 5 Խաչանի
- 6 Խաչ :Խ:
- 7 զեկան տ-
- 8 ոսի սուրք եկէ-
- 9 զեցիս կ-
- 10 արգեցին:

Լ. 160316 ՏԵՂՈՐՄ, ՄԻ ԱՅԼ ՔԵՂԱՐԻ ՎԵՐՎ.

- 1 Կաման Աստուծոյ եւ Ազարէս...
- 2 մեն տվի էլ զուտնի զՊարսմանու
- 3 Շահմարգեանց հողերն Սուրք Եւանիս վա-
- 4 նաց արագան բողի զհողի եւ զի...

ԼԱ. 160316 ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՏԱԿ ՔԵՂԱՄ ՄԻ
ՔԵՂԱՐԻ ՎԵՐՎ.

- 1 Կաման Աստուծոյ եւ Ուսար եւ ամուսին
- 2 իմ Գուր-
- 3 ծին միաբանեցաւ Սուրք Ստեփանոսի Լի
- 4 տվաւ ի
- 5 հալալ բնից մեզ հող բաժին. վարդա-
- 6 պետ եւ
- 7 միաբանեա սահմանեցին Մաղարդարին
- 8 :Զ: պատարագ, :Գ:
- 9 ինն [եւ] :Բ: Գուրնիկին. կատարիչն
- 10 օրհնին յԱստուծոյ:

ԼԲ. 160316 ՏԵՂՈՐՄ, ՄԻ ԱՅԼ ՔԵՂԱՐԻ ՎԵՐՎ.

- 1 Կաման Աստուծոյ այս մեր...
- 2 Սմայաւա, Փախարդալա...
- 3 Աստուծոյ տվաւ զիւտեա...
- 4 ա հողն զբան չաղա [ցն է Սուրք Ստեփ-]
- 5 անա, զեցին :Ե: աւ պա [տարագ]...

ԼԳ. 160316 ՏԵՂՈՐՄ, ԵՆԽՈՐԱՆԻ ՎԵՐ ՄԻ
ԵՐԵՎԱՆԻ ՔԵՂԱՐԻ ՎԵՐՎ.

ԹԴ. ՉԽԵ (1296). Կաման Աստուծոյ եւ
Սարգիս Կանկնեցի զիւրա բարեխաւս ինն
եւ ծնողաց իմաց:

ԼԴ. 160316 ՏԵՂՈՐՄ, ՄԻ ԱՅԼ ՔԵՂԱՐԻ ՎԵՐՎ.

- 1 ... ի պարտի զու...
- 2 ... տնի որ զարմու...
- 3 ... հար մեա կա...
- 4 ... Փախար զաւել Սուրք Ս [տեփանոս]...
- 5 ... Սուրք Սարգիս տաւին...

16. ՎԵՐՋՆԻՍ ԿԻՑ ՄԻ ԱՅԼ ԲԵԿՈՐԻ ՎՐԱ.

- 1 ... ցոց այս ո...
- 2 ... պա ի նմարեմ...
- 3 ... ա տակա ձոր...
- 4 ... [Ստե]փանոսի տ...
- 5 ... սուրեան...

19. ՆԱԽՈՐԴԻՆ ԿԻՑ ՄԻ ԱՅԼ ԲԵԿՈՐԻ ՎՐԱ.

- 1 [Կաման Աստուծոյ] ես վարհամշան Ուտեցի...
- 2 ... ցայ Թանատի վանաց եւ տ[վի]...
- 3 ... տափոյ հողն Սուրբ Ստեփանոսիս [վարդապետ եւ
- 4 միաբանես] սահմանեցին :Գ: ար պա- տարագ Համբարձման տանին...
- 5 ... յ. կատարիչ արեւին Աստուծոյ, խափանիչ դատին
- 6 յԱստուծոյ:

17. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎԵՅԱՆ ՊԱՏԻՆ, ԱՐՏԱՔՈՒՍ.

«Կաման Աստուծոյ ես Մտինանա տուի գմեր հայրենիքն պարոնացն ողորմութեամբ էաշոյ Մարիամ հաթունին Սուրբ Ստեփան- նոսի և Սուրբ Նշանիս Մխիթարայ հոգոյն. միաբանես սահմանեցին :Դ: Ժամ Տեառնըն- դառաքին, :Բ: Մխիթարայ, մէկն ինձ. ի թվիս ԶԺԸ»⁶:

18. ՆՈՒՅՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂՄԻ ԼՈՒՍԱՄՈՒՏԻ ՇՈՒՐՋԸ.

«Կաման Աստուծոյ ես Ասլան ափայս և իմ ուղիքս միաբանեցաք Սուրբ Ստեփանոսիս և տվաք :Ճ: Դեկան ընծայ, վարդապետք և միա- բանք սահմանեցին զշարաքն Զատկին: Կա- տարիչ օրհնին յԱստուծոյ. թվին ԶԶԵ (1326)»⁶:

⁵ Սարգիս արքեպիսկոպոս Զալաբանց, «Ճանապարհ- հորդութիւն ի Մեծն Հայաստան», մասն Բ, Տփլիս, 1858 թ., էջ 208:

⁶ Նույն տեղում, էջ 211:

ՎԱՆՔԻՑ ՀԱՐԱՎ ԳՏԵՎՈՂ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՏԱՊԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ⁷.

19.

Թուի .Ոկէ. (1218). կանգնեցաւ խաչս ի բարեխաւսութիւն հաշատրոյ անյաղք փիլի- սոփայի տարածամ փոխեցաւ յիշեցէք ի Բս.

19.

Թվ. ՈՂ. (1241). Աստուած ողորմի Գորգայ և Գրիգորոյ.

19.

Ի թվ. ՉԱ. (1252). Մեք Սարգիս և Սիմե- տն կանգնեցաք զխաչս ի բարեխաւսու...

19. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎԵՅԱՆ ԱՆՅԱՆ ՍՏՈՐԻՆ ԽՈՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ՎԵՐԵՎՈՒՄ.

«Կաման Աստուծոյ ես Մկրտիչ ծառա Աս- տուծոյ ետու յիմ հալալ արդեանց եւ սպա- սաւորք սուրբ ոչխաիս խոստացան .Բ. ար ժամ Սուրբ Յակոբա տանին. կատարիչ արեւին յԱստուծոյ»⁸:

19. ՆՈՒՅՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍ.

«Սուրբ խաչս բարեխաւս է Մուշեղի»⁹:

19. ՆՈՐԻՑ ՎԱՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՂՄԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ.

Ես Մանուէլ Բահանայ կանգնեցի զխաչս բարեխաւս հարազատ եղբար իմոյ հաշա- տուրի. յաղարթս յիշեցէք. թվ. ԶԻԶ (1277):

⁷ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, «Խաղրա- կյանք կամ Պոռշյանք Հայոց պատմութիւն մեք», Գ, Նյու-Յորք, 1942/3:

⁸ «Նյուիթեր Կովկասի հնագիտութիւն», գիրք XIII, Մոսկվա, 1916 թ., էջ 127 (տեքստը ռուսերէն, արձա- նագրութիւնները հայերէն լեզուներով):

⁹ Նույն տեղում, էջ 133:

